


## Չինժառայողին անզգուշությամբ եվ անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելը եվ դրանց հանցակազմի տարրերը

Կարապետյան Արմեն Ս.

փոխգնդապետ, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի ռազմաիրավական  
պատրաստության և միջազգային մարդասիրական իրավունքի ցիկլի պետ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-2618-4906>  
[armenkarapetyan19781402@gmail.com](mailto:armenkarapetyan19781402@gmail.com)

ՀՏԳ՝ 159.96; EDN: ITZRQZ

DOI: 10.58587/18292437-2026.1-55

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** զինվորական հանցագործություն, ինքնասպանություն, անուղղակի դիտավորություն, անզգուշություն, թեթևամտություն, անփութություն, զինվորական ծառայության կարգ, պատճառական կապ, քրեական պատասխանատվություն

### Доведение военнослужащего до самоубийства по неосторожности и с косвенным умыслом и элементы их состава преступления

Карапетыан Армен С.

подполковник, начальник цикла военно-правовой подготовки и международного  
гуманитарного права Военной академии имени В. Саргсяна МО РА (Ереван, РА)

**Аннотация.** Доведение военнослужащего до самоубийства по неосторожности и с косвенным умыслом является тяжким преступлением, требующим особого внимания и тщательного правового анализа.

Правильная квалификация преступления требует՝

- Тщательное изучение объективных и субъективных аспектов преступления
- Правильное определение формы вины
- Правильное различие между косвенным намерением и небрежностью
- Всесторонняя оценка всех обстоятельств

Косвенный умысел характеризуется последствия прогноза и в отношении них с учетом или равнодушным отношением к армении. Неосторожность может выражаться в легкомыслии (предвидение последствий с необоснованной надеждой) или небрежности (непредугадывание последствий).

Военных преступлений, профилактика требует системной работы военнослужащих, правовых и психологических повышение готовности, укрепление дисциплины, военнослужащих, психологическое состояние, мониторинг, прямой ответственности командиров повышение.

Только при комплексном подходе, сочетающем правовые, организационные, образовательные и психологические меры, можно сократить количество самоубийств военнослужащих и обеспечить высокие дисциплинарные и моральные стандарты военной службы.

**Ключевые слова и словосочетания:** воинское преступление, самоубийство, косвенный умысел, неосторожность, легкомыслие, небрежность, порядок воинской службы, причинная связь, уголовная ответственность

### Driving A Serviceman to Suicide by Negligence and With Indirect Intent and Elements of Their Corpus Delicti

Karapetyan Armen S.

Lieutenant Colonel, Head of the Military Law and International Humanitarian Law Cycle  
at the V. Sargsyan Military Academy of the Ministry of Defence of the Republic of Armenia (Yerevan, RA)

**Abstract.** Driving a serviceman to suicide by negligence and with indirect intent is a serious crime that requires special attention and careful legal analysis.

The correct qualification of a crime requires՝

- A thorough examination of the objective and subjective aspects of the crime
- Correct definition of the form of guilt
- The correct distinction between indirect intent and negligence
- Comprehensive assessment of all circumstances

Indirect intent is characterized by the consequences of forecasting and regarding them with consideration or indifference to Armenia. Carelessness can be expressed in recklessness (anticipating the consequences with unfounded hope) or negligence (not anticipating the consequences).

War crimes prevention requires the systematic work of military personnel, legal and psychological improvement of readiness, strengthening discipline, military personnel, psychological state, monitoring, direct responsibility of commanders increase.

Only with an integrated approach combining legal, organizational, educational and psychological measures can the number of suicides of military personnel be reduced and high disciplinary and moral standards of military service can be ensured.

**Keywords & phrases:** Military Crime, Suicide, Indirect Intent, Negligence, Recklessness, Carelessness, Military Service Order, Causal Link, Criminal Liability

## Ներածություն

Չինձառայողների ինքնասպանությունը ժամանակակից բանակներում և ուժային կառույցներում մնում է կարևորագույն խնդիրներից մեկը, որը պահանջում է համակարգային ուսումնասիրություն և կանխարգելիչ միջոցառումների մշակում: Չինձառայողի ինքնասպանության հասցնելը, անկախ դրա իրականացման ձևից և հանցավորի մեղքի ձևից, հանդիսանում է ծանր հանցանք, որը խախտում է զինվորական ծառայության կարգը, վտանգում մարդու կյանքը և առողջությունը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում զինձառայողին ինքնասպանության հասցնելը նախատեսված է որպես հատուկ հանցակազմ, որն ունի իր առանձնահատկությունները և պահանջում է մանրակրկիտ իրավական վերլուծություն: Հատկապես կարևոր է տարբերակել հանցանքի կատարումը անուղղակի դիտավորությամբ և անզգուշությամբ, քանի որ այս երկու մեղքի ձևերը տարբեր իրավական հետևանքներ են առաջացնում:

Սույն հոդվածի նպատակն է համակարգված կերպով վերլուծել զինձառայողին անզգուշությամբ և անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու հանցանքի բոլոր կողմերը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, կազմերը, որակավորման առանձնահատկությունները և այլն:

Չինձառայողին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ դիտարկվում է որպես զինվորական հանցագործություն: Այս հանցանքը ոտնձգություն է հանդիսանում զինվորական ծառայության կարգի և զինձառայողի կյանքի ու առողջության նկատմամբ:

Հանցակազմը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով, որը սահմանում է պատասխանատվություն զինձառայողի ինքնասպանության կամ դրա փորձի հասցնելու համար՝ տարբերակելով հիմնական և որակավորված կազմերը [8]:

Օրենսդիրը տարբերակում է հանցանքի կատարումը տարբեր մեղքի ձևերով՝ դիտավորությամբ (ուղղակի և անուղղակի) և անզգու-

շությամբ (թեթևամտությամբ և անփութությամբ): Սույն հոդվածում մենք կենտրոնանալու ենք անուղղակի դիտավորությամբ և անզգուշությամբ կատարված հանցանքների վրա:

Չինձառայողի ինքնասպանության հասցնելու հանցանքի սոցիալական վտանգավորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն խախտում է զինվորական ծառայության կարգը, որը հիմնված է կարգապահության խիստ պահանջների վրա: Չինվորական կոլեկտիվում հարաբերությունների խախտումները, խաղաղության, ինչպես նաև ավագադպրոցության, անբարեհամբույր վերաբերմունքի դրսևորումները կարող են ավերիչ հետևանքներ ունենալ ոչ միայն զոհի, այլև ամբողջ զինվորական կոլեկտիվի համար [3]:

Չինձառայողի կյանքի կորուստը նվազեցնում է զինված ուժերի մարտական պատրաստականությունը, բացասաբար է ազդում զինվորական ծառայության հեղինակության վրա հասարակությունում:

Դիտարկվող հանցանքի օբյեկտը բարդ է: Հիմնական անմիջական օբյեկտը զինվորական ծառայության կարգն է, մասնավորապես՝ զինվորական ծառայության անցման, զինձառայողների միջև հարաբերությունների, կարգապահության պահպանման կարգը:

Լրացուցիչ անմիջական օբյեկտ են հանդիսանում զինձառայողի կյանքը և առողջությունը: Մինչդեռ զինվորական ծառայության կարգը հանդիսանում է հիմնական օբյեկտ, զինձառայողի կյանքի և առողջության պաշտպանությունը չի կարող դիտարկվել որպես երկրորդական նշանակություն ունեցող արժեք:

Երրորդ, ֆակուլտատիվ օբյեկտ կարող է լինել զինված ուժերի հեղինակությունը, մարտական պատրաստականությունը, ինչպես նաև զինվորական կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտը:

Հանցանքի օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ պարտադիր տարրերով՝ հասարակության համար վտանգավոր արարքով, հետևանքներով և պատճառական կապով:

**Հասարակության համար վտանգավոր արարքը** կարող է արտահայտվել երկու ձևով՝ գործողություն կամ անգործություն: Գործողու-

թյունների օրինակներ կարող են լինել՝ զին-  
ծառայողին մշտական ծաղրելը, վիրավորելը,  
նվաստացնելը, ֆիզիկական բռնություն կիրա-  
ռելը, անարգելը, անտանելի ծառայական  
պայմաններ ստեղծելը: Անգործությունը կարող է  
արտահայտվել զինծառայողի նկատմամբ ան-  
հրաժեշտ հոգածության և աջակցության ցուցա-  
բերման պարտականության չկատարմամբ, երբ  
դրա համար եղել են բոլոր անհրաժեշտ  
պայմանները:

Կարևոր է, որ արարքը պետք է կատարվի  
զինվորական ծառայության հետ կապված հա-  
րաբերությունների շրջանակներում: Սա նշանա-  
կում է, որ հանցավորը և զոհը պետք է լինեն  
զինվորական ծառայության իրավահարաբերու-  
թյունների մասնակիցներ, և հանցանքը կա-  
տարվի հենց այդ ծառայության առթիվ:

**Հետևանքները** կարող են լինել երկու տե-  
սակի՝ զինծառայողի ինքնասպանությունը կամ  
ինքնասպանության փորձը: Ինքնասպանու-  
թյունը մարդու կողմից գիտակցաբար սեփական  
կյանքից զրկելն է: Ինքնասպանության փորձը  
գործողություններ են, որոնք ուղղված են  
սեփական կյանքից զրկելուն, բայց որոնց  
հետևանքով մահը չի հայտնվել անձից անկախ  
հանգամանքների պատճառով:

**Պատճառական կապը** պետք է առկա լինի  
հանցավորի արարքի և զինծառայողի ինքնա-  
սպանության կամ դրա փորձի միջև: Պատճա-  
ռական կապի առկայությունը նշանակում է, որ  
հենց հանցավորի արարքն է հանգեցրել զինծա-  
ռայողի ինքնասպանությանը կամ դրա փորձին:  
Պատճառական կապի բացակայությունը բացա-  
ռում է քրեական պատասխանատվությունը այս  
հանցակազմով [7]:

Հանցանքի սուբյեկտ կարող է լինել միայն  
զինծառայողը: Սա է հանցանքի հատուկ  
սուբյեկտը: Չինծառայող են համարվում՝

- պարտադիր զինվորական ծառայության  
զինծառայողները
- պայմանագրային զինծառայողները
- զինվորական ուսումնական հաստատու-  
թյունների կուրսանտները
- զինապարտները զինվորական վար-  
ժանքների և հավաքների ժամանակ

Հանցանքի սուբյեկտը պետք է լինի 16  
տարին լրացած անձ: Ավելի երիտասարդ անձինք  
չեն կարող լինել զինվորական հանցագործու-  
թյան սուբյեկտ:

Կարևոր է նշել, որ հանցավորի դիրքը  
զինվորական հիերարխիայում կարող է ազդել  
հանցանքի որակավորման վրա: Օրինակ,  
հրամանատարական կազմի ներկայացուցիչների  
կողմից կատարված նմանատիպ հանցանքները  
կարող են ունենալ լրացուցիչ որակավորող  
հանգամանքներ:

Մեղքը հանցանքի սուբյեկտիվ կողմի  
կարևորագույն տարրն է, որը արտացոլում է  
հանցավորի հոգեբանական վերաբերմունքը իր  
կատարած արարքի և դրա հետևանքների  
նկատմամբ:

Օրենսդիրը սահմանում է պատասխա-  
նատվություն հանցանքի կատարման համար  
անկախ մեղքի ձևից, սակայն մեղքի ձևը ազդում  
է պատիժը նշանակելու վրա: Դիտավորությամբ  
կատարված հանցանքը դիտարկվում է որպես  
ավելի ծանր և պատժվում է ավելի խիստ:

Անուղղակի դիտավորությունը մեղքի  
ձևերից մեկն է, որը բնութագրվում է որոշակի  
հատկանիշներով: Քրեական օրենսդրության  
համաձայն՝ անուղղակի դիտավորությամբ է  
կատարվում հանցանքը, երբ անձը գիտակցել է  
իր արարքի հասարակական վտանգավորու-  
թյունը, նախատեսել է իր արարքի հասարա-  
կության համար վտանգավոր հետևանքների  
առաջացման հավանականությունը, թեև գի-  
տակցաբար չի ցանկացել դրանց առաջացումը,  
բայց հաշվի է առել կամ անտարբեր է եղել դրանց  
առաջացման նկատմամբ [9]:

Անուղղակի դիտավորության դեպքում  
հանցավորի հոգեբանական վերաբերմունքը  
բաղկացած է երկու տարրից՝ **իմացական** և  
**կամային**:

Իմացական տարրի մեջ մտնում են՝

**Գիտակցումը** – հանցավորը գիտակցում է  
իր արարքի հասարակական վտանգավորու-  
թյունը:

**Կանխատեսումը** – հանցավորը կանխատե-  
սում է իր արարքի հասարակության համար  
վտանգավոր հետևանքների առաջացման հա-  
վանականությունը:

Այս իմացական տարրը բացահայտում է, որ  
անուղղակի դիտավորության դեպքում հանցա-  
վորը կանխատեսում է հետևանքները ոչ որպես  
անխուսափելի, այլ որպես հավանական: Նա  
հասկանում է, որ իր արարքները կարող են  
հանգեցնել զինծառայողի ինքնասպանությանը,  
բայց ենթադրում է նաև, որ դա կարող է չլինել:

Կամային տարրը անուղղակի դիտավորու-  
թյան դեպքում արտահայտվում է հանցավորի  
կամային վերաբերմունքով հետևանքների  
նկատմամբ: Հանցավորը գիտակցաբար չի  
ցանկանում հետևանքների առաջացումը, բայց  
հաշվի է առնում կամ անտարբեր է եղել դրանց  
առաջացման նկատմամբ:

**Հետևանքների չցանկանալը** – հանցավորը  
չի ցանկանում, որ զինծառայողը ինքնասպանվի:  
Նա չի հետապնդում այդ նպատակը:

**Հաշվի առնելը կամ անտարբերությունը** –  
չնայած հետևանքների չցանկանալուն, հանցա-  
վորը կամ հաշվի է առնում դրանց առաջացման  
հավանականությունը, կամ անտարբեր է մնում  
դրանց նկատմամբ:

Օրինակ զինժառայող Ա-ն մի քանի ամիս շարունակ համակարգված կերպով նվաստացնում և խայտառակում է իր ծառայակից Բ-ին: Նա գիտակցում է, որ Բ-ը հոգեբանորեն խիստ անկայուն վիճակում է, սակայն չի ցանկանում, որ նա ինքնասպանվի: Միևնույն ժամանակ, Ա-ն հասկանում է, որ իր վարքագիծը կարող է հանգեցնել այդպիսի հետևանքների, բայց անտարբեր է մնում դրանց նկատմամբ: Բ-ն ի վերջո ինքնասպանվում է: Այս դեպքում Ա-ն գործել է անուղղակի դիտավորությամբ:

Անուղղակի դիտավորության առկայության ապացուցումը բարդ գործընթաց է: Քանի որ մեղքը հոգեբանական վերաբերմունք է, ուղղակի ապացույցներ դրա մասին հազվադեպ են լինում: Անուղղակի դիտավորությունը հաստատվում է թե՛ անուղղակի, թե՛ ուղղակի ապացույցների հիման վրա:

#### **Անուղղակի ապացույցներ՝**

- Հանցավորի արարքների բնույթը և համակարգվածությունը
- Հանձնարարականներ
- Հանցավորի վերաբերմունքը զոհի նկատմամբ
- Չինվորական կոլեկտիվի վկայություններ
- Հոգեբանական փորձաքննության արդյունքներ
- Չոհի անձնական գործի և բժշկական փաստաթղթերի տվյալներ

#### **Ուղղակի ապացույցներ՝**

- Հանցավորի խոստովանությունը
- Հանցավորի հայտարարությունները այլ անձանց
- Գրավոր նյութեր (նամակներ, հաղորդագրություններ)

Կարևոր է նշել, որ անուղղակի դիտավորության և անզգուշության տարբերակումը հատկապես բարդ է, քանի որ երկու դեպքում էլ հանցավորը չի ցանկանում հետևանքների առաջացումը: Տարբերությունը կայանում է կամային վերաբերմունքում՝ անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը հաշվի է առնում կամ անտարբեր է, մինչդեռ անզգուշության դեպքում նա անհիմն հույս ունի, որ հետևանքները չեն լինի, կամ չի կանխատեսում դրանք:

Քրեական օրենսդրությունը տարբերակում է անզգուշության երկու տեսակ՝ **թեթևամտությունը և անփութությունը:**

Թեթևամտությամբ է կատարվում հանցանքը, երբ անձը կանխատեսել է իր արարքի հասարակության համար վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը, բայց անհիմն հույս է ունեցել դրանց կանխման վրա:

**Իմացական տարրը** – հանցավորը կանխատեսում է հետևանքների առաջացման հավանականությունը: Նա հասկանում է, որ իր

արարքները կարող են հանգեցնել զինժառայողի ինքնասպանությանը:

**Կամային տարրը** – հանցավորը անհիմն հույս ունի հետևանքների կանխման վրա: Նա կարծում է, որ կարող է խուսափել բացասական հետևանքներից, սակայն դա հիմնավորված չէ կոնկրետ հանգամանքներով:

Անհիմն հույսը տարբերվում է հիմնավորված հույսից: Հիմնավորված հույսը հիմնված է կոնկրետ, օբյեկտիվ հանգամանքների վրա, որոնք իրոք կարող էին կանխել հետևանքները: Անհիմն հույսը հիմնված է միայն ենթադրությունների, ցանկությունների կամ հավատի վրա՝ առանց իրական հիմքերի:

**Օրինակ:** Չինժառայող Ե-ն իր ծառայակից Չ-ին հանձնարարում է ծանր ֆիզիկական աշխատանք, չնայած գիտի, որ Չ-ն առողջական խնդիրներ ունի: Ե-ն կանխատեսում է, որ Չ-ն կարող է հիվանդանալ կամ վնասվածք ստանալ, բայց հույս ունի, որ ամեն ինչ լավ կլինի, քանի որ «ամեն անգամ էլ լավ էր լինում»: Չ-ն, չդիմապահելով ֆիզիկական և հոգեբանական ճնշմանը, փորձում է ինքնասպանել: Ե-ն գործել է թեթևամտությամբ:

Անփութությամբ է կատարվում հանցանքը, երբ անձը չի կանխատեսել իր արարքի հասարակության համար վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը, թեև տվյալ պարագայում պետք է և կարող էր դրանք կանխատեսել:

**Իմացական տարրը** – հանցավորը չի կանխատեսում հետևանքների առաջացումը: Նա չի ենթադրում, որ իր արարքները կարող են հանգեցնել զինժառայողի ինքնասպանությանը:

**Կամային տարրը** – հանցավորը պետք է և կարող էր կանխատեսել հետևանքները: Մա նշանակում է, որ օբյեկտիվ հանգամանքները պահանջում էին, որ հանցավորը կանխատեսեր հետևանքները, և նա սուբյեկտիվորեն կարող էր դա անել, բայց չի արել անփութության պատճառով:

Անփութության առկայության համար անհրաժեշտ է, որ միաժամանակ առկա լինեն «պետք է» և «կարող էր» կանխատեսելու երկու պայմանները:

**«Պետք է» կանխատեսել** – օբյեկտիվ պահանջ, որը պայմանավորված է՝

- Օրենքով սահմանված պարտականություններով
- Մասնագիտական կամ ծառայողական պարտականություններով
- Ընդհանուր ընդունված վարքագծի կանոններով

**«Կարող էր» կանխատեսել** – սուբյեկտիվ հնարավորություն, որը գնահատվում է՝

- Անձի տարիքի, կրթության, փորձի հիման վրա

- Անձի մտավոր ունակությունների հիման վրա
- Կոնկրետ իրավիճակի բնութագրերի հիման վրա

**Թեթևամտության և անփութության տարբերությունները**

Հիմնական տարբերությունը կայանում է իմացական տարրում՝

• **Թեթևամտության դեպքում** հանցավորը **կանխատեսում է** հետևանքների հավանականությունը, բայց անհիմն հույս ունի դրանց կանխման վրա:

• **Անփութության դեպքում** հանցավորը **չի կանխատեսում** հետևանքները, թեև պետք է և կարող էր դա անել:

Երկու դեպքում էլ հանցավորը չի ցանկանում հետևանքների առաջացումը, բայց թեթևամտության դեպքում նա գիտակցում է դրանց հավանականությունը, մինչդեռ անփութության դեպքում ոչ [2]:

Անզգուշության ապացուցումը պահանջում է հետևյալ հանգամանքների հաստատում՝

1. Հանցավորի արարքի և հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը
2. Հանցավորի հոգեբանական վերաբերմունքը (չցանկանալը, կանխատեսելը կամ չկանխատեսելը)
3. «Պետք է» և «կարող էր» կանխատեսելու պայմանների առկայությունը (անփութության դեպքում)
4. Անհիմն հույսի առկայությունը (թեթևամտության դեպքում)

Ապացույցների աղբյուրները կարող են լինել՝

- Վկաների ցուցմունքներ
- Փաստաթղթեր (ծառայողական, բժշկական, անձնական)
- Փորձագիտական եզրակացություններ (հոգեբանական, բժշկական)

Անուղղակի դիտավորության և անզգուշության միջև սահմանագիծը շատ դեպքերում բարակ է: Սակայն այս տարբերակումը հիմնարար նշանակություն ունի՝

- Զրեական պատասխանատվության սահմանման համար
- Պատժի տեսակի և չափի որոշման համար

- Հանցանքի սոցիալական վտանգավորության գնահատման համար
- Իրավական որակավորման ճշգրտության համար

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ քրեական օրենսգիրք: – Երևան, 2021. – 418 էջ:
2. ՀՀ քրեական օրենսգիրք (ՀՀ ՔՕ), ընդունված 18.04.2003 թ., № ՀՕ-528, Գլուխ 33 – Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166697>
3. ՀՀ ՊՆ հրաման № 1456 "Չինված ուժերում կարգապահության և զինծառայողների իրավունքների պաշտպանության մասին", 15.09.2017 թ. <https://www.mil.am/>
4. ՀՀ քրեական իրավունքի դասագիրք. – Երևան, 2022, – 550 էջ:
5. «Ռ-ազմաիրավական պատրաստություն» դասագիրք. – Երևան, 2015.
6. Ռ-ազմաիրավական պատրաստություն «Իրավական ակտերի ժողովածու» դասագիրք. – Երևան, 2011.
7. **Կարապետյան, Լ. Մ.** "Անուղղակի դիտավորությունը և անզգուշությունը. տարբերակման խնդիրները", Հայկական իրավաբանական հանդես, 2021, № 4, էջ 78-94
8. **Մինասյան, Ռ. Հ.** Չինծառայողների հոգեբանական վիճակը և ինքնասպանությունների կանխարգելումը զինված ուժերում // Հոգեբանության և սոցիոլոգիայի հարցեր, 2020, № 3, էջ 112-128
9. **Տունյան, Վ. Ա., Քաղաքացյան, Ս. Տ.** "Զրեական իրավունք. Հատուկ մաս": – Եավան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 456-478:
10. Комментарий к уголовному кодексу РФ под ред. А. В. Наумова. – М. 1997.
11. Комментарий к закону об уголовной ответственности за воинские преступления. – М. 1986.
12. Курс советского уголовного права, 5-й том. – Ленинград, 1981. – 654 с.
13. **Аветисян С. С.** "Воинские преступления: Теория и практика". – Ереван, 2001.
14. **Тер-Акопов А. А.** "Правовые основания уголовной ответственности военнослужащих". – М. 1981. – 125 с.

Տճանա/Հանձնվել է՝ 04.02.2026  
Рецензирована/Գրախոսվել է՝ 10.02.2026  
Принята/Ընդունվել է՝ 16.02.2026